

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱՆՍԱՐԱՆ

ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ
(ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ
Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոն

«ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

**Դասընթացի ծրագիր
(արաբական երկրների օրինակով)**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018**

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4
Չ 151

*Հրատարակության և երաշխավորել ԵՊՀ միջազգային
հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհուրդը*

Ծրագրի հեղինակ՝ պ.գ.թ. դոցենտ **Չալըմյան Ն. Տ.**

Չալըմյան Ն. Տ.

Չ 151 «Երկրագիտություն» (Արաբական երկրների օրինակով):
Դասընթացի ծրագիր/ Ն. Տ. Չալըմյան.- Եր.: ԵՊՀ հրատ.,
2018, 24 էջ:

«Երկրագիտություն» (Արաբական երկրների օրինակով) դասընթացի ծրագիրը մշակվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի և միջազգային հարաբերությունների ու դիվանագիտության ամբիոնի ներկայացրած կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան:

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4

ISBN 978-5-8084-2331-2

© ԵՊՀ 2018
© Չալըմյան Ն. Տ.

Բովանդակություն

Ծանոթագրություն.....	5
ԲԱԺԻՆ 1	
ԿԱԶՄՍԱԿԵՐՊՉԱԿԱՆ - ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ	7
1.1. Դասընթացի նպատակը.....	7
1.2 Դասընթացի խնդիրները.....	7
1.3 Դասընթացի կրթական արդյունքները.....	7
1.4 Կրթական մեթոդները (պարապմունքների անցկացման ձևերը) .	8
1.5 Դասընթացի բովանդակության յուրացման խնդիրները	8
1.6 Գիտելիքների ստուգման ընթացիկ ձևերը.....	9
ԲԱԺԻՆ 2	
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ	
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	10
2.1 Դասընթացի կազմակերպման մեթոդական տվյալները.....	10
2.2 Դասընթացի թեմատիկ պլանը	10
2.3.Դասընթացի բովանդակությունը.....	12

Ծանոթագրություն

58B/40B «Երկրագիտություն» (արաբական երկրների օրինակով՝ 2 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (18 դասախոսություն, 6 ժամ սեմինար) 8-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Երկրագիտություն (արաբական երկրների օրինակով) դասընթացի ծրագիրը մշակվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսումնական խորհրդի ու միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի կրթական ծրագրերին համապատասխան:

Երկրագիտությունը (արաբական երկրներ) գիտություն է արաբական աշխարհի մաս կազմող շուրջ երկու տասնյակից ավելի երկրների քաղաքական, տնտեսական, ռազմական, պետական համակարգերի առանձնահատկությունների, ինչպես նաև մահմեդական կրոնի, մշակույթի, պատմության, միջարաբական հարաբերությունների ու հայկական համայնքների ուսումնասիրության մասին:

«Երկրագիտությունը» (արաբական երկրներ) դասընթացի ծրագրում, հաշվի առնելով թեմայի ծավալի մեծությունը, նախապատվությունը տրվել է հիմնականում արաբական այն երկրներին, որոնք կարևոր դեր են խաղացել և շարունակում են խաղալ միջազգային հարաբերություններում ընդհանրապես և արաբական աշխարհում՝ մասնավորապես: Հետևաբար դասընթացի ծրագրում ուշադրությունը կենտրոնացված է մասնավորապես Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի և Լիբանանի վրա:

«Երկրագիտություն» (արաբական երկրների օրինակով) կրթական ծրագրով դասընթացը նախատեսվում է իրականացնել միջազգային հարաբերությունների ֆակուլտետի և դիվանագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանողների համար:

Դասընթացի ավարտից հետո ուսանողները պատկերացում կունենան Մերձավոր Արևելքի վերոնշյալ արաբական երկրների զարգացման առանձնահատկությունների, նրանց արտաքին քաղաքա-

կանության, միջազգային հարաբերություններում ունեցած դերի, քաղաքական իրադարձությունների, տնտեսական քաղաքական կուսակցությունների, մշակույթի զարգացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հետ նրանց ունեցած հարաբերությունների մասին:

ԲԱԺԻՆ 1

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ - ՄԵԹՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1.1. Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակը ուսանողին հիմնականում ծանոթացնելն է արաբական հետևյալ երկրների՝ Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի և Լիբանանի պատմության, տնտեսության զարգացման առանձնահատկություններին, նրանց մշակութային կյանքին, միջարաբական հարաբերություններում առկա հակամարտություններին և ՀՀ-ի հետ երկկողմ հարաբերություններին:

1.2 Դասընթացի խնդիրները

Դասընթացի խնդիրներն են՝

- ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների մոտ ձևավորել ընդհանուր պատկերացում արաբական երկրների մասին բոլոր առումներով,
- նպաստել ուսումնասիրվող երկրների պատմության, քաղաքականության, հասարակական-մշակութային կյանքին առնչվող թեմաների շուրջ արաբերենով գիտելիքների հաղորդման ու բանավոր շփման հմտությունների զարգացմանը:

1.3 Դասընթացի կրթական արդյունքները

1. Խոր գիտելիքների ձեռքբերման կարողություն արաբական երկրների փաստագրական պատմության մասին:

2. Արաբական երկրների պատմության օրինաչափությունների ուսումնասիրում:

3. Ուսումնասիրվող արաբական երկրների սոցիալ-տնտեսական, քաղաքական իրադարձությունների և առանցքային հարցերի մասին գիտելիքների ձեռքբերում:

Ըստ հաղորդակցային իրազեկության

1. Միասնական խնդիրների և հարցադրումների պատրաստման միջոցով համատեղ թիմով արաբերենով աշխատելու ընդունակության զարգացում:

2. Առարկայի վերաբերյալ արաբերենով հաղորդակցության հմտությունների զարգացում:

3. Բանավոր և գրավոր (արաբերենով) հաղորդակցվելու ընդունակություն:

1.4 Կրթական մեթոդները (պարապմունքների անցկացման ձևերը)

ա. դասախոսություններ (արաբերենով)

բ. սեմինար պարապմունքներ արաբերենով (հաշվի առնելով անհատական մոտեցումը)

գ. արաբերենով արտալսարանային հաղորդակցություն դասախոսի հետ

1.5 Դասընթացի բովանդակության յուրացման խնդիրները

- Դասընթացի ավարտին ուսանողը կունենա գիտելիք և իմացություն:

- Կձանոթանա ուսումնասիրվող արաբական երկրների պատմությանը, տնտեսությանը, մշակութային կյանքին, քաղաքականության և ներկայիս քաղաքական զարգացումներին և այլ հիմնախնդիրների:

Ունակ կլինի (բուն մասնագիտական կարողություններ)՝

- ներկայացնելու Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի և Լիբանանի մասին երկրագիտական անհրաժեշտ գիտելիքներ՝ առնչելով դրանք ժամանակակից աշխարհաքաղաքական զարգացումներին:

- հասկանալու արաբական աշխարհի առաջատար երկրների զարգացման առանձնահատկությունները:

(Ընդհանրական կարողությունները)

- Ստացած գիտելիքները տեսական հիմք կծառայեն արաբական աշխարհում քաղաքական իրադարձությունների և երևույթների փոխկապակցվածության և տարածաշրջանային գործընթացների նկատմամբ որոշակի դիրքորոշման ձևավորման համար:

- Կարող է նպաստել արաբական երկրների պատմական զարգացման ընդհանուր օրինաչափությունների և առանձնահատկությունների մասին գիտելիքների ձեռքբերմանը, որը գործնականում կարող է կիրառվել դիվանագիտական աշխատանքի ժամանակ:

1.6 Գիտելիքների ստուգման ընթացիկ ձևերը

1. Ինքնուրույն աշխատանքի արդյունքների ստուգում՝ գործնական պարապմունքների ժամանակ (միջանկյալ վերահսկում, լրացուցիչ աղբյուրների և գրականության օգտագործում):

2. Դասընթացի թեմաների թեստավորում, սահմանային կամ ընդհանուր արդյունքների թեստավորում:

3. Ընթացիկ (միջանկյալ) գրավոր քննություն:

4. Ընթացիկ (միջանկյալ) բանավոր քննություններ:

ԲԱԺԻՆ 2
ԴԱՍԸՆԹԱՅԻ ԹԵՄԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Գասընթացի կազմակերպման մեթոդական տվյալները

Աշխատանքի տեսակը	Ժամաքանակը
Ընդհանուր ժամաքանակը	60
Լսարանային աշխատանք	24
Դասախոսություններ	18
Սեմինարներ	6
Ինքնուրույն աշխատանք	36
Գիտելիքի ընթացիկ վերահսկման տեսակները (ստուգողական աշխատանքներ, միջանկյալ գրավոր քննություններ)	1 ժամ 1 ուսանողի համար
Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

2.2 Գասընթացի թեմատիկ պլանը

Թեմաների բաժինների անվանումները	Ցերեկային ուսուցում			
	Ժամաքանակը			
	Դասախոս	Սեմինար պարապմունք	Ինքնուրույն աշխատանք	Ժամերն ըստ թեմաների
Թեմա 1. Ներածական մաս Դասընթացի նպատակները և խնդիրները: Դասընթացի վերաբերյալ գրակա-	2			2

նության և տեղեկատվական այլ աղբյուրների տեսություն				
Թեմա 2. Ընդհանուր ակնարկ արաբական երկրների պատմական զարգացման օրինաչափությունների, հիմնական փուլերի և առանձնահատկությունների մասին	2			
Թեմա 3. Եգիպտոսի Արաբական Հանրապետությունը. Նրա զարգացման ընթացքը հին ժամանակներից մինչև մեր օրերը	4 2	2		
Թեմա 4. Սիրիայի Արաբական Հանրապետությունը որպես մերձավորարևելյան տարածաշրջանի կարևոր դերակատարություն ունեցող երկիր	2	2		
Թեմա 5. Իրաքի Հանրապետութ-	2			

յան դերը մերձավորարևելյան տարածաշրջանում				
Թեմա 6. Լիբանանի Հանրապետությունը, նրա պատմական ուղին և դերը արաբական աշխարհում	2	2		
Թեմա 7. Հակամարտությունները Մերձավոր և Միջին Արևելքում (1980-ական-1990-ական թթ.) և ԱՄՆ քաղաքականությունը	2	2		
Թեմա 8. Պաղեստինի խնդիրը և արաբա-իսրայելական հակամարտությունը	2	2		

2.3. Դասընթացի բովանդակությունը

Թեմա 1. Ներածական մաս: Դասընթացի նպատակները և խնդիրները: Դասընթացի վերաբերյալ գրականություն և տեղեկատվական այլ աղբյուրների տեսությունը

Ներածական մաս: Դասընթացի նպատակները և խնդիրները: Արաբական երկրների պատմության, տնտեսության, մշակույթի, մահմեդական կրոնի և այլ ոլորտների խորությամբ ուսումնասիրումը:

Արաբական երկրների պատմության ուսումնասիրման, սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունների, քաղաքա-

կան զարգացումների, տարածաշրջանային իրադարձությունների մասին գիտելիքների ձեռքբերումը:

Գիտական շրջանակներում քննարկվող մերձավորարևելյան երկրների վերաբերյալ առանցքային հարցերի շուրջ ուսումնասիրության նշանակությունը:

Սեմինար պարապմունքների հարցեր

1. Մերձավոր Արևելքի դերն ու տեղը միջազգային հարաբերություններում

2. Մերձավորարևելյան երկրների բնորոշ գծերն ու առանձնահատկությունները

Գրականություն

1. Ասթարջյան Կ., Արաբների պատմություն, Բեյրութ, ա. հ.:

2. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն. Արաբները 7-րդ դարից մինչև 1516 թ., հ. 1, Երևան, 2003:

3. «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշար:

Թեմա 2. Ընդհանուր ակնարկ արաբական երկրների պատմական զարգացման օրինաչափությունների, հիմնական փուլերի և առանձնահատկությունների մասին

Արաբական երկրների պատմության ուսումնասիրությունը 7-րդ դարից մինչև 1516 թվականը: Մահմեդական կրոնի և նրա ճյուղավորումների առաջացումը (սուննի-շիա տարբերությունը):

Արաբական երկրները օսմանյան տիրապետության շրջանում (1516-1918 թթ.):

Սեմինար պարապմունքների հարցեր

1. Արաբական երկրները Աբբասյան և Օմայան խալիֆոսության շրջանում

2. Մահմեդական կրոնի տարածումը արաբների մոտ

Գրականություն

- 1 Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն. Արաբները 7-րդ դարից մինչև 1516 թ., հ. 2, Երևան, 2004:
2. Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003:
3. Аль Джабарти Абу ар Рахман, Египет в период экспедиции Бонапарта (1798-1801), Москва, 1962.
4. Ջոն Էսպոզիտո, Իսլամական սպառնալիք. Առասպել, թե՞ իրականություն, Երևան, 2003:
5. Dekmejian R., Islam in Revolution: Fundamentalism in the Arab World, New York, 1985.

Թեմա 3. Եգիպտոսի Արաբական Հանրապետությունը. Նրա զարգացման ընթացքը հին ժամանակներից մինչև մեր օրերը:

Պարմական ընդհանուր ակնարկ Եգիպտոսի մասին: Եգիպտոսի նվաճումը և նրա հայրնվելը Օսմանյան կայսրության կազմում 1516 թ.:

Եգիպտոսը Մուհամեդ Ալիի իշխանության օրոք: Նսպոլեոնի արշավանքը Եգիպտոս:

Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի մրցակցությունը Եգիպտոսում: Մուեզի ջրանցքի կառուցումը 1859-1869 թթ. և Եգիպտոսի տնտեսական զարգացումը: Բրիտանական տիրապետության հաստատումը Եգիպտոսում 1882-1914 թթ.:

Եգիպտոսը Առաջին աշխարհամարտի տարիներին և անգլիական մանդատի հաստատումը երկրում: 1952 թ. եգիպտական հեղափոխությունը և Եգիպտոսի Արաբական Հանրապետության հռչակումը: 1956 թ. Մուեզի ճգնաժամը: 1958-1961 թթ. եգիպտա-սիրիական միասնությունը և Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծումը: ԱՄՆ-ի փլուզումը:

Եգիպտոսը արաբ-իսրայելյան պատերազմի շրջանում (1967 թ.): 1973 թ. Հոկտեմբերյան պատերազմը: 1978 թ. Քենդիդևիլիյան համաձայնագիրը, Եգիպտոսի և Իսրայելի միջև քաղաքական նոր իրադ-

րության ստեղծումը Մերձավոր Արևելքում: Եգիպտոսը Հունի Մութարաքի կառավարման տարիներին (1980-2011 թթ.):

Եգիպտոսի կառավարման համակարգը, կրոնները, բնակչության կազմը, փոքրամասնությունները:

Եգիպտոսի հայ համայնքը և նրա դերը երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում:

Եգիպտոսի տնտեսության հիմնական ճյուղերը և արտաքին տնտեսական կապերը: Եգիպտոսի մշակույթը և նրա հիմնական ուղղությունները: Քաղաքական կուսակցությունները և զինված ուժերը: Եգիպտոսի միջարաբական արտաքին քաղաքականությունը: ՀՀ-ի և ԵԱՀ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և դրանց զարգացման ոլորտները:

Մեմինար պարապմունքի հարցեր

1. Եգիպտոսի դերը արաբական աշխարհում (պատմություն, տնտեսություն, մշակույթ)

2. Եգիպտոսը տարածաշրջանային քաղաքականության և քաղաքական իրադարձությունների հոլովույթում

Գրականություն

1. Ալլաոյաճյան Ա., Եգիպտոսի նահանգը և հայերը, Գահիրե, 1960:

2. Ասիայի և Աֆրիկայի երկրների նոր պատմություն, Երևան, 1978:

3. Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003:

4. Беляев И., Примаков Е. М., Египет: время президента Насера, Москва, 1974.

5. Курдгелашвили Ш. Н., Революция 1952 г. и крах британского господства в Египте, Москва, 1966.

6. Медведко Л. И., К Востоку и Западу от Суэца, Москва, 1980.

7. Петросян Ю. А., Османская империя: могущество и гибель. Исторические очерки, Москва, 1978.

8. Примаков Е. М., *Анатомия ближневосточного конфликта*, Москва, 1978.

9. Примаков Е. М., *Истия одного сговора*, Москва, 1985.

10. Ротштейн Ф. А., *Захват и закабаления Египта*, Москва, 1959.

11. Diane B., *The Economic Diplomacy of the Suez Crisis.*, Univ. of North Carolina., 1991.

Թեմա 4. Միրիայի Արաբական Հանրապետությունը որպես մերչանտիլիզմի և փոստ-կոլոնիալիզմի արտադրանքի դերակատարություն ունեցող երկիր

Պատմական ակնարկ Միրիայի մասին: Միրիան Օսմանյան խալիֆայության շրջանում: Միրիայի նվաճումը թուրքերի կողմից և հայտնվելը օսմանյան տիրապետության տակ: Միրիան 19-րդ դարում. Թանգիմաթների շրջանը: Տնտեսական գաղութացման շրջանը եվրոպական տերությունների կողմից (1840-ական թթ.):

Միրիան Առաջին աշխարհամարտից հետո, ազգային-ազատագրական պայքարը (1920-1946), Միրիան ֆրանսիական մանդատի տարիներին: 1946 թ. անկախության հռչակումը: Միրիան «ազգայնական վարչակարգերի» փոփոխման տարիներին (1945-1958 թթ.): Միրիայի միավորումը Եգիպտոսի հետ և Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծումը 1958 թ. և լուծարումը 1961 թ.:

1963 թ. Միրիայում Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցության իշխանության գալը, նրա միջարաբական արտաքին քաղաքականությունը: 1967 թ. արաբ-իսրայելական «Վեցօրյա պատերազմը» և քաղաքական նոր իրադրության ստեղծումը տարածաշրջանում: Խորհրդա-սիրիական հարաբերությունները:

1973 թ. Հոկտեմբերյան պատերազմը և Միրիայի դիրքորոշումը պաղեստինյան հակամարտության կարգավորման նկատմամբ: Միրիայի վերաբերմունքը 1978 թ. Քենֆիդիկոյան եգիպտա-իսրայելական համաձայնագրի նկատմամբ: Միրիա-իսրայելական բանակցային գործընթացը խաղաղության շրջանակներում 1991-2001 թթ.:

Միրիան Հաֆեզ Ասադի իշխանությունից հետո: Նախագահ Բաշար Ասադի վերակառուցման քաղաքականությունը:

Սիրիայի քաղաքական կուսակցությունների ընդհանուր բնութագիրը: Սիրիայի ազգաբնակչության կազմը: Ազգային փոքրամասնությունների խնդիրները: Սիրիայի հայ համայնքը և նրա դերը երկրում: Սիրիայի տնտեսության հիմնական ճյուղերը: Սիրիայի մշակույթը: Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև հարաբերությունները 1992-2015 թթ. և զարգացման հեռանկարները: Իրադարձությունները Սիրիայում 2011-2018 թթ.:

Մեմինար պարապմունքի հարցեր

1. Պատմական ակնարկ Սիրիայի մասին ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտը:

2. Սիրիան Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Ֆրանսիական մանդատի հաստատումը Սիրիայում, անկախության համար մղվող պայքարի տարիները: Քաղաքական գլխավոր իրադարձությունները անկախությունից հետո: Սիրիայի միջարաբական քաղաքականությունը: Սիրիայի տնտեսության հիմնական ուղղությունները, մշակույթը, հայ համայնքը:

Գրականություն

1. Բայրամյան Ա., Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936-1939 թթ.), Երևան, 1988:

2. Կարապետյան Ռ., Սիրիան և մեծավորարևելյան խաղաղության գործընթացը, Երևան, 2000:

3. Հովհաննիսյան Ն., Հեղափոխական գործընթացը արաբական աշխարհում, Երևան, 1990:

4. Հովհաննիսյան Ն., Սարգսյան Հ., Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917-1946), Երևան, 1975:

5. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 1., Երևան, 2003, 2004, 2006, 2007:

6. Ղարիբջանյան Գ., Հաֆեզ ալ Ասադի ուղիչ շարժումը Սիրիայում, Երևան, 2012:

7. Մանուկյան Ս., Իսլամական արմատականությունը Սիրիայում. Առաջացման և ակտիվացման պատճառները: «Մերձավոր

Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ», հոդվածների ժողովածու, Երևան, 2002:

8. Նաջարյան Ե., Արաբական ազգային մշակութային զարթոնքը, Երևան, 1998:

9. Григорян Г., Позиция Сирии в ближневосточном конфликте, Ереван, 1987.

10. Khouzy Philip, Syria and the French Mandate, London, 1989.

11. Ziadeh, A. Nicola, Syria and Lebanon, London, 1957.

Թեմա 5. Իրաքի Հանրապետության դերը մերչափորարևելյան փարածաշրջանում

Պատմական ակնարկ Իրաքի մասին մինչև 1516 թ. թուրքերի կողմից գրավումը: Իրաքը Օսմանյան կայսրության տիրապետության շրջանում: Իրաքը Թանզիմաթի (բարեփոխումների) շրջանում: Իրաքը Առաջին աշխարհամարտից հետո. անգլիական մանդատի հաստատումը երկրում: Իրաքը Երկրորդ աշխարհամարտի տարիներին: 1958 թ. իրաքյան հեղափոխությունը և միապետության տապալումը: Բաասական (Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցություն) վարչակարգի հաստատումը Իրաքում և արաբական երկրների միասնության գաղափարի վերածնունդը: 1967 թ. արաբ-իսրայելական պատերազմը և Իրաքի դիրքորոշումը:

Իրաքը Սադդամ Հուսեյնի իշխանության տարիներին (1979-2003 թթ.), Իրան-իրաքյան պատերազմը (1980-1989) սուսնի-շիա հակասության խորացումը իրանական հեղափոխության արտահանման Իրանի ղեկավարության հետ ունեցած միտումների համատեքստում: Քաղաքական իրադրության սրացումը տարածաշրջանում 1991 թ. Իրաքի կողմից Քուվեյթ ներխուժման արդյունքում: Միջազգային կոալիցիայի ձևավորումը և ԱՄՆ-ի ներխուժումը Իրաք. Բաաս կուսակցության հեռացումը իշխանությունից: Ներքաղաքական ճգնաժամը Իրաքում և անկայությունը սուսնի-շիա հակամարտության խորացման: Միջարաբական հարաբերություններ:

Իրաքը՝ որպես նավթ արդյունահանող երկիր: Իրաքի տնտեսության հիմնական ուղղությունները, արտաքին տնտեսական կապերը:

Խորհրդա-իրաքյան հարաբերությունները: Իրաքի բնակչության կազմը, կրոնական հարանվանությունները և ազգային փոքրամասնությունների ընդհանուր բնութագիրը: Քաղաքական կուսակցությունները: Մշակույթը Իրաքում: Հայ համայնքը Իրաքում (ազգային վարժարանների, եկեղեցիների, հասարակական կազմակերպությունների գործունեությունը): Հայաստանի Հանրապետության և Իրաքի Հանրապետության միջև հարաբերությունների ընդհանուր բնութագիրը:

Մեմինար պարապմունքի հարցեր

1. Պատմական ակնարկ Իրաքի մասին հին ժամանակներից մինչև Առաջին աշխարհամարտը: Իրաքը 20-րդ դարում՝ գլխավոր քաղաքական իրադարձությունները: Իրաքի տնտեսությունը և մշակույթը:

2. Իրաքը 21-րդ դարի սկզբին: Ներքաղաքական իրադարձությունների ընդհանուր բնութագիրը:

Գրականություն

1. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 4., Երևան, 2007:

2. Чалымян Н., Сирийско-иракские отношения 1961-1967 гг., Ереван, 2002.

3. Данциг Б., Ирак в прошлом и настоящем, Москва, 1980.

4. Иванов Н., Османское завоевание арабских стран (1516-1574), Москва, 1984.

5. Лазарев Р., Крушение турецкого господства на арабском востоке (1914-1918), Москва, 1960.

6. Маргарян Р., Зона Персидского залива, Москва, 1986.

7. Оганесян Н., Национально-освободительное движение в Ираке (1917-1958), Ереван, 1976.

8. Федченко А., Ирак в борьбе за независимость (1917-1969), Москва, 1970.

9. Longrigg S., Four Centuries of Modern Iraq, Oxford, 1925.

10. Smith J. Edward George Bush's War, New York, 1992.

Թեմա 6. Լիբանանի Հանրապետությունը. նրա պատմական ուղին և դերը արաբական աշխարհում

Պատմական ակնարկ Լիբանանի մասին: Լիբանանը 19-րդ դարում (Թանզիմաթի՝ բարեփոխումների շրջանը): Առաջին աշխարհամարտից հետո ֆրանսիական մանդատի հաստատումը Լիբանանում: Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում և Լիբանանի Հանրապետության ստեղծումը: Լիբանանի բնակչության կրոնադավանական կազմը: Լիբանանի քաղաքական համակարգի առանձնահատկությունները: 1958 թ. Լիբանանի քաղաքացիական պատերազմը և հայ համայնքը: 1975 թ. քաղաքացիական պատերազմը և ճգնաժամի նկատմամբ Սիրիայի և Իսրայելի դիրքորոշումը: 1982 թ. Իսրայելի ներխուժումը Լիբանան և ներքաղաքական իրավիճակի սրացումը երկրում: ԱՄՆ-ի դիրքորոշումը պաղեստինյան հակամարտության նկատմամբ: Լիբանանի հարավը՝ Սիրիա-Իսրայել լիբանանյան ուժերի պայքարի կենտրոն:

Տարածաշրջանային զարգացումները և Լիբանանը 1990-2014 թթ.: Լիբանանի տնտեսության հիմնական ոլորտները (զբոսաշրջություն, բանկային համակարգ, գյուղատնտեսություն, թեթև արդյունաբերություն):

Ազգային փոքրամասնությունների ընդհանուր բնութագիրը, կրոնական հարանվանությունները, քաղաքական կուսակցությունները: Կրթությունը և մշակույթը Լիբանանում:

Լիբանանի հայ համայնքը և նրա դերը երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում: Հայկական ավանդական կուսակցությունների գործունեությունը երկրում: Մամուլ, կրթություն, եկեղեցի: Հարաբերությունները Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև, զարգացման ընթացքը:

Մեմինար պարապմունքի հարցեր

1. Լիբանանը Առաջին աշխարհամարտից հետո մինչև անկախությունը: ԱՄՆ-ի դիրքերի ուժեղացումը Լիբանանում: Քաղաքացիական պատերազմի շրջանը:

2. Լիբանանը պաղեստինա-իսրայելական հակամարտության համատեքստում: Հայ համայնքը և նրա զարգացման գործընթացը:

Գրականություն

1. Թյուքունջյան Պ., Լիբանանի ժողովրդի ազատագրական պայքարը և հայ համայնքը (1920-1990), Երևան, 1992:

2. Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003:

3. Հովհաննիսյան Ն., Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում 1938-1958, Երևան, 1969:

4. Հովհաննիսյան Ն., Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը 1975-1989 թթ., Երևան, 1982:

5. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան (1918-2005.), հ. 3, Երևան, 2006, հ. 4, Երևան, 2007:

6. Հարությունյան Ա., ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը Լիբանանի 2-րդ քաղաքացիական պատերազմի և ճգնաժամի ընթացքում. 1975-1991 թթ., Երևան, 2008:

7. Չալընյան Ն., Լիբանանի հայ համայնքը երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում, Երևան, 2002:

8. Պրիմակով Ե., Մի դավադրության պատմություն, Երևան, 1987:

9. Avi-Ran R., The War of Lebanon: Arab Documents Tel-Aviv, 1987.

10. Davisha A., Syria and Lebanes Crisis, New York, 1980.

Թեևս 7. Հակամարտությունները Մերձավոր և Միջին Արևելքում 1980-1990-ական թթ. և ԱՄՆ-ի քաղաքականությունը

Քաղաքական լարվածությունը Պարսից ծոցի տարածաշրջանում 1970-ական թթ. վերջերին: ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը և նրա դերը Պարսից ծոցի պատերազմներում: ԱՄՆ-ի դաշնակցային կապերի ամրապնդումը Պարսից ծոցի արաբական երկրների հետ. ԽՍՀՄ դիրքերի թուլացումը և ԱՄՆ-ի ռազմական

ներկայությունը մերձավորարևելյան տարածաշրջանում: Ահաբեկչությունը՝ որպես հիմնական անկայունության գործոն Մերձավոր Արևելքում:

Մեմինար պարապմունքի հարցեր

1. 1978-1979 թթ. Իրանի իսլամական հեղափոխությունը և նրա ազդեցությունը արաբական երկրների սոցիալ-քաղաքական կյանքի վրա: Իրան-իրաքյան պատերազմը և Քուվեյթյան ճգնաժամը:

2. ԱՄՆ և տարածաշրջանային զարգացումները Մերձավոր Արևելքում:

Գրականություն

1. Александров А., Монархии персидского залива: Этап модернизации, Москва, 2000.

2. Кузьмин А., К вопросу о модели региональной безопасности на Ближнем Востоке (1990-е-2002 гг.), Москва, 2004.

3. Олимпиев А., Ближний и Средний восток, Москва, 2004.

4. Хамид А., Имам Хомейни: политическая борьба от рождения до кончины, Москва, 1999.

Թեմա 8. Պաղեստինի խնդիրը և արաբ-իսրայելական հակամարտությունը

Իսրայել պետության ստեղծումը և արաբ-իսրայելական հակամարտությունը: Արաբ-իսրայելական պատերազմները 1948-1982 թթ.: Մեծ տերությունների դիրքորոշումները հակամարտության և Պաղեստինի խնդրի նկատմամբ: Նոր շեշտադրումներ Եգիպտոսի արտաքին քաղաքականության մեջ: 1979 թ. Քենփոլիդյան համաձայնագիրը Իսրայելի և Եգիպտոսի միջև և նոր քաղաքական իրադրության ստեղծումը Մերձավոր Արևելքում: Բանակցային գործընթացը Պաղեստինյան խնդրի կարգավորման հարցում:

Մեմինար պարապմունքի հարցեր

1. Արաբ-իսրայելական հակամարտության փուլերը և Պաղեստինյան խնդրի կարգավորման գործընթացը

2. Նոր զարգացումներ Պաղեստինյան խնդրի կարգավորման հարցում և բանակցային գործընթացները 2005 թվականից մինչև մեր օրերը:

Գրականություն

1. Հարությունյան Ա., ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը իսրայել-պաղեստինյան հակամարտության հանդեպ, Երևան, 2001:

2. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 4, Երևան, 2007:

3. Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003:

4. Պրիմակով Ե., Մի դավադրության պատմություն, Երևան, 1987:

5. Олимпиев А., Ближний и Средний Восток, Москва, 2004.

6. Кисилев В., Палестинская проблема и ближневосточный кризис, Киев, 1981.

7. Примаков Е., Анатомия ближневосточного конфликта, Москва, 1978.

8. Tessler M., A History of the Israeli-Palestinian Conflict, USA, 1993.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ
Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոն

«ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

Պատմության ժրագիր (արաբական երկրների օրինակով)

Ծրագրի հեղինակ՝ պ.գ.թ.դոցենտ **Չալոյան Ն. Տ.**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Վարդան Մկրտչյան» ԱԶ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 27.11.2018:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 1.5:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am



ՎՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2018
publishing.ysu.am